ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

4 մայիսի 2012թ. թիվ 152

ՎԱՆԻՉԿԱ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության պետական տեսչության պետի 2012 թվականի հունվարի 25–ի N 07-Ա կարգադրության համաձայն՝ 2012 թվականի փետրվարի 6-ից մարտի 9-ը ներառյալ Լոռու մարզի ուսումնական հաստատությունների 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարանների՝ ընդունելության, փոխադրման, տեղափոխման, ավարտման կարգերին համապատասխան սովորողների շարժի և ավարտական պետական փաստաթղթերի ստացման, պահպանության և բաշխման վերաբերյալ ուսումնասիրությունների մասին տեղեկանքը և հաշվի առնելով Վ.Նալբանդյանի բացատրությունը՝

Կ ա ր գ ա դ ր ու մ ե մ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի ապրիլի 10-ի N 193-Ն հրամանով հաստատված «Ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման և ավարտման» կարգի 18-րդ կետի պահանջը խախտելու պատճառով «ՀՀ Լոռու մարզի Կուրթանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Վանիչկա Նալբանդյանի նկատմամբ կիրառել «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա.ԴԱՐԲԻՆՅԱՆ

2012թ. մայիսի 4
ք.Վանաձոր